

Казарян Севак Арменович

НЕОПУБЛИКОВАННАЯ НАСЛЕДИЯ ПАРУЙРА СЕВАКА:  
ХУДОЖЕСТВЕННАЯ ПРОЗА И ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата  
филологических наук по специальности 10.01.02 – “Армянская  
литература новейшего периода”.

Защита состоится 20-го марта 2013 года в 14<sup>30</sup> на заседании специализированного  
совета ВАК 012, действующего  
при ЕГУ.

Адрес: РА Ереван, улица Х. Абовяна, 52а, факультет армянской  
филологии, аудитория 202.

Резюме

Диссертационная работа посвящена исследованию неопубликованной прозы и научного наследия Паруйра Севака. Если неопубликованная часть поэтического наследия П. Севака в какой-то мере достаивалась публикаций и сопровождающих их комментариев, то этого нельзя сказать о его неоконченном романе “Аманедж” и двух трудах, касающихся средневековой армянской литературы: кандидатской диссертации “ Псевдо-Шапух Багратуни и вопросы раннего ренессанса в Армении ” и исследования “Саят-Нова и армянское средневековье”. До сих пор литературоведам и читателям известны лишь отдельные свидетельства, подтверждающие их существование, которые приведены в частности в монографии А.Аристамеса “Паруйр Севак” (1974).

Во “**Введении**” кратко обосновывается выбор диссертационной темы, ее актуальность, научная новизна, определяются цели.

**Первая глава** – “Аманедж” посвящена творческому интересу, проявляемому писателем к прозе и созданному на этой основе роману. Путем текстуального анализа в диссертации выявляются содержательно-тематическая направленность романа, искусство создания образов, жанровые и стилистические особенности.

Неоконченный и неопубликованный роман П. Севака “Аманедж” выделяется и привлекает внимание в первую очередь тем, что в отличие от многих произведений того времени, в основе его конфликта лежат человек, человеческие отношения, судьбы, а не советская идеология и надуманное нравочучение. Именно благодаря этому герои “Анамеджа” не являются неживыми и ограниченными носителями идеи, а вполне художественно удавшиеся образы.

П. Севак расширяет рамки романистики, включая присущие описываемой им эпохе обычаи и верования, быт, жизненный уклад, “географию” региона, которые имеют большое этнографическое, культурологическое и научно-историческое значение. Исследованный и накопленный им огромный материал Севак мастерски и со вкусом “внедрил” в роман, сохраняя чувство меры.

**Вторая глава** – “Псевдо-Шапух Багратуни и вопросы раннего ренессанса в Армении” посвящена кандидатской диссертации П. Севака. В этой главе описывая рукопись сохранившейся части диссертации,

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԵՎԱԿ ԱՐՄԵՆԻ

Պ Ա Ր Ո Ւ Թ Ր Ս Ե Վ Ա Կ Ի Ա Ն Տ Ի Պ Ժ Ա Ռ Ա Ն Գ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը.

Գ Ե Ղ Ա Ր Վ Ե Ս Տ Ա Կ Ա Ն Ա Ր Զ Ա Կ Ե Վ

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ժ. 01. 02 - «Լորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական դեկավար՝ Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԵՅՐԱՆ ԶԱՎԵՆԻ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԱՂԱՆՅԱՆ ՆՈՐԱՅՐ ՄԱՐՏԻՐՈՍԻ**

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԲԵՔՄԵՋՅԱՆ ԱՍՏԴԻԿ ՄԱՐԳՍԻ**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. մարտի 20-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:  
Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. փետրվարի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝



**Ա. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

վերածննդի հարցերը Հայաստանում» դիսերտացիոն աշխատանքը ամեննին էլ «համարյա պատրաստի» չէ, այլ իսկապես կիսատ է:

7. Համեմատության-համադրության մեթոդը հնարավորություն է տալիս ասելու, որ Պ. Սևակն իր «Կարծեցյալ Շապուհ...» անավարտ ուսումնասիրության մեջ միանգամայն ճիշտ ուղղությամբ էր շարժվում՝ նկատելով ու մատնանշելով այնպիսի գիտական փաստեր, որոնք վրիպել էին նույն հարցով զբաղվող նախորդ բանասերների ուշադրությունից:
8. Պ. Սևակը «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատությամբ բացահայտում է Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան տաղերգուների այնպիսի նմանություններ, առնչակցություններ և կապեր՝ բաղդատելով դրանք ըստ թեմատիկ տարատեսակ պատկանելիության, որոնք մինչ այդ չէին նկատվել հայ միջնադարյան գրականության պատմաբանների և մասնագետների կողմից:
9. Սայաթ-Նովա - հայ միջնադար շրթան Պ. Սևակը ետ է տանում՝ հասցնելով մինչև **Սայաթ-Նովա – հայ միջնադար – Հին ու Նոր կտակարաններ – հունական դիցաբանություն – եբրայական մշակույթ – ասորաբաբելոնական մշակույթ** հանգույցին: Այս մոտեցումով Պ. Սևակը այստեղ էլ դուրս է գալիս ազգային գրականության ու մշակույթի սահմաններից՝ նույն այդ ազգայինը համաշխարհային տարբեր մշակույթների ասպարեզներից դիտարկելու նպատակադրմամբ:
10. Աստվածաշնչյան տարատեսակ դիրքորոշումներին ու համոզմունքներին հեղինակը մոտենում է ինչպես իր ժամանակի՝ 20-րդ դարի երկրորդ կեսում ապրող մտավորականի դիտանկյունից, այնպես էլ (թեմայի պարտադրանքից ելնելով) միջնադարում ապրող մարդու (ավելի ստույգ՝ հայ տաղերգուի) տեսանկյունից:
11. Հին ու Նոր կտակարանների տարբեր դրույթները Պ. Սևակը վերլուծում է ոչ միայն փիլիսոփայական տեսանկյունից, այլև երևան է հանում դրանց առաջացման պատճառահետևանքային կապը պատմամշակութային առումով: Այս վերլուծություններում ու մեկնություններում ընդգծվում է Պ. Սևակ մտածողի բազմիմացությունը և մտքի խորատեսությունը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ**

1. Պարույր Սևակի «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» անավարտ աշխատությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2012, թիվ 136.1, էջ 9-23:
2. Պարույր Սևակի «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» անտիպ աշխատությունը, «Կանթեղ», 2012, Երևան, թիվ 4, էջ 3-21:
3. Պ. Սևակի «Անամեջ» անտիպ վեպի ստեժման պատմությունից, «Հայագիտական հանդես», 2012, Երևան, թիվ 3, էջ 80-86:
4. Պ. Սևակի արխիվի ճակատագիրը և ներկայիս վիճակը, «Կանթեղ», 2013, Երևան, թիվ 1, էջ 3-7:

Անկասկած է՝ «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատությամբ Պ. Սևակ գիտնականն ու մտածողը նորովի է ներկայանալու ընթերցողին:

Անգամ անավարտ լինելով՝ սույն հետազոտությունը կարևորագույն արժեք ունի ինչպես Սայաթ-Նովայի ու միջնադարյան հայ բանաստեղծների առնչակցությունների պարզաբանման և լուսաբանման հարցում, այնպես էլ իր Պ. Սևակի գիտական ժառանգության ամբողջական ուսումնասիրման առումով:

### **Ե Զ Ը Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ը**

1. Ներկայացված երեք ստեղծագործությունները շաղկապվում են իրար ոչ միայն անտիպ, այլ նաև անավարտ լինելու փաստով: Այս գործերը տարբեր տեսանկյուններից դիտարկելով՝ գալիս ենք այն եզրակացության, որ, չնայած դրանց կիսատ կամ թերի լինելուն, բոլոր երեքն էլ անպայմանորեն կգտնեն իրենց ընթերցողին և ուսումնասիրողին:
2. Պ. Սևակի «Ամանեջ» անտիպ և անավարտ վեպը առաջին հերթին առանձնանում և ուսումնասիրողի ուշադրությունն է գրավում այն փաստով, որ, ի տարբերություն ժամանակի բազմաթիվ այլ գործերի, նրա կոնֆլիկտի հիմքում ընկած են մարդը, մարդկային հարաբերությունները, ճակատագրերը, այլ ոչ թե խորհրդային գաղափարախոսությունն ու շինծու բարոյախոսությունը: Հենց դրա շնորհիվ էլ «Ամանեջի» հերոսները անկենդան ու կաղապարված գաղափարակիրներ չեն, այլ գեղարվեստականորեն միանգամայն կայացած ու հաջողված կերպարներ:
3. «Ամանեջ» վեպն իր ժանրային պատկանելությամբ հարում է հոգեբանական վեպին, քանզի հեղինակը առաջին հերթին կարևորում է հերոսների ներաշխարհի բացահայտումը:
4. «Ամանեջը», պոեմատային հենք ունենալով գյուղը, այդուամենայնիվ չի դասվում «գյուղագրություն» թերիմաստ անունը կրող ստեղծագործությունների շարքին, որ պիտի ասպարեզ գային փոքր-ինչ ավելի ուշ: Պ. Սևակը շեշտը դնում է գյուղի անցած պատմական ճանապարհի, այլ ոչ թե գյուղի կորստյան, կարոտի, գաղափարական կամ բարոյական նահանջների, գյուղ-քաղաք հակադրության վրա, որը բնական կլիներ «գյուղագրության» դեպքում: Այդ առումով «Ամանեջը», եթե ավարտին հասցվեր, թերևս կարող էր նմանվել Մ. Շոլոխովի «Խաղաղ Դոնին»:
5. Պ. Սևակը ընդլայնում է վիպագրության սահմանները՝ ներառելով իր պատկերած ժամանակաշրջանի սովորույթներն ու հավատալիքները, կենցաղն ու կենցաղավարությունը, տարածաշրջանի «աշխարհագրությունը», որոնք ունեն ազգագրական, մշակութաբանական, պատմագիտական մեծ նշանակություն: Այդ ուսումնասիրած-կուտակած ահռելի նյութը Սևակը հմտորեն «ներմուծել» է վեպի պահպանելով չափի ճաշակավոր զգացումը:
6. Փաստերի համադրումը և դրանցից բխող տրամաբանական եզրակացությունները հիմք են տալիս ասելու, որ հակառակ գրականագիտության մեջ տարածված կարծիքի, Պ. Սևակի «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Ատենախոսությունը նվիրված է Պարույր Սևակի անտիպ արձակ և գիտական ժառանգության ուսումնասիրությանը: Եթե Պ. Սևակի չափաձո ժառանգության անտիպ մասը ինչ-որ չափով արժանացել է հրապարակումների ու դրանց ուղեկցող մեկնաբանությունների, նույնը չենք կարող ասել նրա անտիպ անավարտ վեպի և միջնադարյան հայ գրականությանը վերաբերող երկու աշխատությունների մասին: Ցարդ գրականագետներին և ընթերցողներին հայտնի են սույն դրանց գոյությունը փաստող առանձին վկայություններ, որոնք տեղ էին գտել հատկապես Ա. Արիստակեսյանի «Պարույր Սևակ» (1974) մենագրության մեջ:

Աշխատանքում քննության են առնվել Պ. Սևակի «Ամանեջ» անավարտ վեպի, «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» թեկնածուական ատենախոսության և «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» հետազոտության բնագրագիտական նկարագրությունն ու գրականագիտական վերլուծությունը:

Աշխատանքում մի կողմից փորձ է արվել բացահայտելու «Ամանեջ» վեպի թեմատիկ-բովանդակային ուղղվածությունը, կերպարաստեղծման արվեստը, ժանրային ու ոճական հատկանիշները: Քննության են առնվել վեպի իրական-վավերական հիմքերի, ստեղծագործական պատմության էական հանգամանքները:

Ատենախոսության մեջ փորձ է արվել նաև հետազոտելու Պ. Սևակի՝ «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը: Նկարագրելով աշխատության պահպանված մասի ձեռագիրը և հիմնավոր փաստարկումով հերքելով դիսերտացիոն աշխատանքի իբր ավարտված լինելու մասին հայտնված կարծիքները՝ քննության է առնվել Պ. Սևակի առաջին լուրջ բանասիրական աշխատանքի բավանդակությունն ու արժեքը:

Բնագրագիտական և մեթոդաբանական նույնատիպ մոտեցմամբ, դարձյալ վերծանելով և կազմելով սևակյան ձեռագրի ամբողջական պատկերը, հետազոտվել է Պ. Սևակի «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» անավարտ մենագրությունը:

### **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության թեմայի արդիականությունն ամենից առաջ պայմանավորված է Պարույր Սևակի անտիպ գործերի («Ամանեջ», «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում», «Սայաթ-Նովան և հայ միջնադարը») առաջին անգամ ամբողջական հետազոտման և արժևորման հանգամանքով:

«Ամանեջ» վեպը Պ. Սևակի ստեղծագործության մեջ նոր էջ է բացում: Եթե մինչ այս Պ. Սևակի գրական ժառանգությունը կարելի էր բաժանել երկու մասի՝ պոեզիա և գրականագիտություն, ապա այժմ սրանց ավելանում է նաև երրորդը՝ արձակ: Պ. Սևակը ծրագրել էր գրել մեծածավալ մի ստեղծագործություն, որն իր էպիկական ընդգրկմամբ կարող էր տեղ գտնել հայ գրականության այնպիսի ստեղծագործությունների շարքում, ինչպիսիք են Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի»-ն, Ավետիք Իսահակյանի «Ուստա Կարո»-ն, Ակսել Բակունցի «Կարմրաքարը» և այլն: Այդուա-

մենայնիվ, նույնիսկ անավարտ վիճակում, «Ամանեջը» նոր էջ է բացում Պարույր Սևակի գրականության մեջ, այն է՝ գեղարվեստական արձակի էջ:

«Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» անավարտ աշխատությունը, նույնիսկ լինելով բավական թերի վիճակում, մեծ հետաքրքրություն է ներկայացնում առավելապես երկու տեսանկյունից:

Նախ՝ սույն աշխատությունը գրական հասարակայնությանը այսուհետ հասանելի դառնալու փաստով կարող է թույլ տալ Պ. Սևակի գիտական ժառանգությունը ուսումնասիրողներին առավել ամբողջական պատկերացում ունենալ նրա անցած գիտական ճանապարհի մասին:

Եվ ապա՝ այս աշխատությունը կարող է առիթ հանդիսանալ բանասերների և գրականության պատմաբանների համար ևս մեկ անգամ ուշադրություն դարձնելու Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը», փորձելու առավել հանգամանորեն քննել ու մեկնաբանել այն, հնարավորինս սպառիչ պատասխաններ տալ բանասիրական և գրականագիտական մի շարք էական հարցերի, որի անհրաժեշտությունը մինչ օրս առկա է:

Պ. Սևակը «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» հիմնարար աշխատությամբ ապացուցում է, որ Սայաթ-Նովայի ստեղծագործությունը ամենատարբեր աղերսներով կապվում է հայ միջնադարյան տաղերգության հետ՝ շարունակելով այն թեմատիկ ու բովանդակային զանազան առումներով: Այս հարցադրումը ժամանակին գրեթե չի ունեցել իր գրականագիտական նախապատմությունը, ավելին՝ այն այսօր էլ խիստ արդիական է: Այս առթիվ գրված և ուսումնասիրության պահպանված աշխատանքային տետրերը, թերթերը և զանազան այլ նյութերը հնարավորություն են տալիս հիմնավոր ենթադրություններ անելու նրա շարունակության մասին, նշելու, թե ինչ ուղղությամբ էր հեղինակը պատրաստվում առաջ տանելու իր աշխատանքը: Ավելի ավարտուն, մաքրագիր էջերը մի կողմից հետաքրքրություն են ներկայացնում ինքնին՝ առանձին վերցված, մյուս կողմից՝ կարող են առիթ հանդիսանալ հայ միջնադարյան գրականության ներկայիս հետազոտողների համար նոր առնչակցություններ և կապեր հայտնաբերելու Սայաթ-Նովայի ու հայ միջնադարյան տաղերգուների միջև:

### ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊՏԱՍԿՆ ՈՒ ԽՆԻՐՆԵՐԸ

Սույն ուսումնասիրության բուն առարկան Պ. Սևակի անտիպ ժառանգության՝ «Ամանեջ» վեպի, «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» վերնագրով առաջին դիսերտացիոն աշխատանքի և «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» հետազոտության բնագրագիտական ու գրականագիտական վերլուծությունն է:

Ատենախոսության մեջ առաջին անգամ Պ. Սևակի արձակը դարձել է հատուկ քննության նյութ:

Պ. Սևակի արձակը և գիտական ուսումնասիրությունները հարուստ նյութ են տալիս գրողի աշխարհայացքը, գեղագիտական ողջ համակարգն ու ստեղծագործական օրինաչափությունները ուսումնասիրողին:

Առաջադրված նպատակներով էլ պայմանավորվել են հետազոտության հետևյալ խնդիրները՝

Եվ ահա թե ինչով ու ինչպես է կարևորվում սիրո առաջնությունը. «Այսպես է, որ 1000-ամյա մի դադարից հետո, մարդը վերադառնում է ինքն իրեն, իր տարրական իրավունքին, որ սիրելը չէ (ամենադաժան գաղափարախոսությունն էլ անգոր է արգելելու դա), այլ սիրերգելը»:

**Չնվաճվեր սիրերգության այդ իրավունքը՝ չէր կարող լինել նաև մեր մեծագույն սիրերգուն, որ Սայաթ-Նովա է կոչվում...**<sup>23</sup> (Ձ., էջ 45-46):

«Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատության երկրորդ («Հոգու և մարմնի ներհակությունը») գլխից սկսյալ Պ. Սևակը երևան է հանում Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան տաղերգուների անմիջական կապերն ու նմանությունները: Դրանք նախ և առաջ արտացոլվում են խոհախրատական բնույթի ստեղծագործություններում՝ հասկապես շեշտելով հոգու և մարմնի հակառակության, անցավորի և անանցի ներհակության խնդիրները:

Պ. Սևակը այսպիսի նմանություն-առնչակցությունների բազմաթիվ օրինակներ է բերում՝ վերլուծելով, համադրելով Գր. Նարեկացու, Ֆրիկի, Հովհ. Երզնկացու, Կ. Երզնկացու, Հովհ. Թլկուրանցու, Գր. Աղթամարցու, Բ. Դպիրի և Սայաթ-Նովայի ստեղծագործությունները:

Պ. Սևակի մանրաքննի ուսումնասիրությունը ապացուցում է, թե Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան տաղերգուների առնչակցությունները հաճախ միջոնորավորված են աստվածաշնչյան պատկեր-մոտիվներով: Աստվածաշունչը դառնում է մի հաճախված կամուրջ, որ կապում է Սայաթ-Նովային հայ միջնադարյան տաղերգուների հետ: Ամենից շատ հենց Աստվածաշնչից են ծագում Սայաթ-Նովայի և միջնադարյան բանաստեղծների առնչակցություններն ու նմանությունները: Նմանություններ, որոնք երբեմն նույնության աստիճանի են հասնում (տեղ-տեղ համընկնելով բառացիորեն և անգամ՝ տառացիորեն):

Առնչակցությունները, բացի հոգու և մարմնի ներհակության գաղափարից, վերաբերում են նաև աշխարհակազմիչ և մարդակազմիչ **չորս տարբերին** (հող, ջուր, կրակ, օդ), որոնցից ամեն մեկը հակասում է մյուսին և որոնց ընդհանրական բառով Պ. Սևակը անվանում է **Քառներհակություն**: Քառներհակության հարցով մտատանջվել և այն իրենց ստեղծագործություններում արտահայտել են մեր միջնադարյան տաղերգուներից շատերը:

Ի դեպ, անհրաժեշտ է նկատել, որ Պ. Սևակը, ցուցանելով հայ միջնադարյան բանաստեղծների ու Սայաթ-Նովայի կապերը և դրանցում առանձնացնելով բանաստեղծական հաջողված պատկերները, միաժամանակ մատնացույց է անում նաև այն պատկերները, որոնք թերի են, չստացված՝ մեծավ մասամբ շարունակաբար ու անընդհատ կրկնվելու պատճառով:

«Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատությունը անավարտ է. այն ընդհատվում է III գլխի սկզբում («Սերը և իր արտահայտությունները»): Այս գլխում հեղինակը ծրագրել էր վերհանել Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան տաղերգուների նմանությունները և առնչակցությունները՝ արտահայտված արդեն սիրային (և ոչ թե խոհախրատական) բնույթի ստեղծագործություններում:

<sup>23</sup> Սույն պարբերության ընդգծումները մերն են – Ս. Ղ. :

**այն վճռական տեսակը, որ կոչվում է սիրերգություն»:** Եվ իսկապես, դժվար է պատկերացնել մի ժողովուրդ, որ ունենա գրականություն, բայց չունենա բանաստեղծություն, առավել դժվար է պատկերացնել մի ժողովուրդ, որ ունենա բանաստեղծություն, բայց չունենա սիրերգություն:

Հայ միջնադարյան բանաստեղծությունը, (Հովհ. Թլկուրանցու գրիչով) վերամիավորելով «Եվա» («կին») և «սեր» բառերը, չի բավականանում այդքանով:

Լսենք Պ. Սևակին. «...կրկնակի սիրով նկատենք, որ այս քայլին հետևում է ևս մի քայլ, ըստ որում մի շատ կարևոր քայլ: Ըստ այսմ **դրախտից** նախամարդու արտաքավելու պատճառը (Եվան) այժմ ինքն է համարվում... **դրախտ** (ավելի ճիշտ՝ ոչ թե ինքը, այլ իր ծոցը):

*Հենց քննարկվող տաղի առաջին իսկ տան մեջ կարդում ենք.*

**Քո ծոցդ է դրախտ, մըրզաց անդաստան:**

*Ավելին. բանաստեղծը չի գոհանում այսքանից և նույն տաղի 10-րդ տան մեջ կրկին է հիշում ծոց-դրախտը.*

**Ձինչ յեղեմ դրախտի՝ ի քո ծոցդ կան<sup>21</sup>»** (Ձ., էջ 35):

Ահա թե ինչպիսի ընթացք է ստանում միջնադարյան հայ բանաստեղծությունը ընդդեմ նույն այդ միջնադարում տիրող դոգմատիկ ու սխալաստիկ մտայնության, աչառու գրաքննության:

Բայց այս էլ դեռ ամենը չէ: Պ. Սևակը ևս մի մեջբերում է կատարում Հովհ. Թլկուրանցուց.

Օճոց է դրախտ անմահութեան,  
Ի յետ դարձնէ զելած հոգին,  
**Ո՛չ մեռանի, ո՛չ ծերանայ,**  
**Ո՛չ երեսվին դառնայ դեղին<sup>22</sup>:**

Հեղինակը հանգում է հետևյալ եզրակացությանը. «Եվ հիմա եկեք մտովին առարկայացնենք այն շրջանագիծը, որ ի կատար է ածում բանաստեղծը իր մեկ քառյակով. կնոջ **պատճառով** դրախտից և անմահությունից զրկված մարդը կնոջ ծոցի **շնորհիվ** վերադառնում է դրախտ ու անմահությանը, ուստի և

Ո՛չ մեռանի, ո՛չ ծերանայ,  
Ո՛չ երեսվին դառնայ դեղին» (Ձ., էջ 40):

Ըստ այսմ՝ վերջնականապես նվաճվում և հիմնովին հաստատվում է սիրո առաջնության գաղափարը: Մի գաղափար, որից, ինչպես տեսանք, բխում են ստեղծագործությունը (կամ բանաստեղծությունը) ընդհանրապես, սիրերգությունը՝ մասնավորապես և երջանկությունն (այսինքն՝ դրախտը) առհասարակ:

- դիտարկել «Ամանեջ» վեպի կերպարային համակարգը՝ գուգադրաբար քննելով վեպի մաքրագիր և սևագիր տարբերակները.

-դիտարկել գրական այն աղերսները, որոնք վեպը կապում են հայ և համաշխարհային գրականության այլ ստեղծագործությունների հետ.

- քննարկել Պ. Սևակի անավարտ առենախոսության գիտական լուրջ արժեքը նրա գրականագիտական ժառանգության համատեքստում՝ բանասիրական փաստերի համադրության միջոցով ցույց տալով հեղինակի առավելությունը նրան նախորդ և հաջորդող հետազոտողների համեմատությամբ.

- դիտարկել Պ. Սևակի առաջադրած թեմատիկ հարցադրումները Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան տաղերգուների առնչակցությունների, ինչպես նաև սրանցից բխող Սայաթ-Նովայի և Հին ու Նոր կտակարանների կապի համատեքստում:

## **ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

1971թ. սեպտեմբերին կայացվում է ՀԽՍՀ Մինիստրների սովետի՝ Պ. Սևակի հիշատակը հավերժացնելու մասին որոշումը, համաձայն որի պիտի տպագրվեր նաև Պ. Սևակի երկերի ժողովածուն:

Ժողովածուն կազմելու գործը հանձնարարվում է Ա. Արիստակեսյանին, և բանաստեղծի արխիվը հանձնվում է նրան՝ առանց թեկուզ թուցիկ ուսումնասիրման, առանց գոնե մոտավոր ցուցակի: 1972-76թթ. տպագրվում է Պ. Սևակի ժողովածուն վեց հատորով, ընդ որում՝ վերջին՝ 6-րդ հատորում, ամփոփվում են Պ. Սևակի արխիվից քաղված հիմնականում անտիպ ստեղծագործությունները (հեղինակի կենդանության օրոք չհրատարակված որոշ գործեր զետեղվում են նաև նախորդ հատորներում):

Հայտնի է, որ Սևակի վաղ շրջանի գործերը (հիմնականում պոեզիան) եղել են (և կան) նաև ուրիշների (ընկերների, մերձավորների) ձեռքին, բայց դրանք հիմնականում կրկնօրինակված են արխիվում պահպանված ինքնագիր-բնագրից կամ արխիվում ունեն իրենց կրկնօրինակը: Այսպես՝ 1985 թվականին հրատարակված «Մուտք» ժողովածուում զետեղված են նաև մինչ այդ անտիպ բանաստեղծություններ. դրանք կազմողին՝ Հովհաննես Ղազարյանին, տրամադրել են տարբեր մարդիկ (ոչ Սևակի ժառանգները) կամ եղել են հենց իր մոտ, սակայն այդ բանաստեղծությունների մեծ մասի ինքնագիր-բնագիրն առկա է արխիվում:

Պ. Սևակը երբեմն իր ձեռագրերը նաև նվիրում էր իր մտերիմներին: Պ. Սևակի այս «սովորությունը» շահարկել են շատերը՝ նրա ձեռագրերը (նաև մեքենագիր օրինակները) պարզապես յուրացնելով ու նրա մահվանից հետո հրատարակելով՝ չունենալով դրա ո՛չ իրավական, ո՛չ էլ բարոյական իրավունքը (օրինակ՝ «Անցյալը ներկայացած»-ի և «Եռաձայն պատարագի» մեքենագիր նախնական տարբերակները, բազմաթիվ բանաստեղծություններ):

Այս դեպքում, սակայն, նույնպես պետք է ասել՝ չկա հրատարակած որևէ տեքստ, որ այս կամ այն ձևով (սևագիր, մաքրագիր, մեքենագիր) պահպանված չլինի Պ. Սևակի արխիվում:

Արխիվում մեծ ծավալ են կազմում Պ. Սևակի ստեղծագործությունների մեքենագիր օրինակները՝ հեղինակի շտկումներով ու խմբագրմամբ: Եվ հենց այստեղ նրա անտարբերությունն ու անփութությունը պարզապես զարմանք են հարուցում: Մեքենագիր վերջնական տարբերակի հակառակ՝ մաքուր երեսին նա կարող էր սևագրություն սկսել

<sup>21</sup> Անդ, էջ 153 և 155: **Ծանոթագրությունը Պ. Սևակինն է:**

<sup>22</sup> **Հովհ. Թլկուրանցի**, Տաղեր, էջ 120 (ընդգծումը մերն է – Ս. Ղ.):

կամ թույլ տալ երեխաներին նկարելու դրանց վրա: Մա է պատճառը, որ բանասիրական-տեքստաբանական ճշգրտման համար այդքան անհրաժեշտ մեքենագիր վերջնական տարբերակը արխիվում հաճախ չի պահպանվել (օրինակ չկան «Անցյալը ներկայացած»-ի, «Եռաձայն պատարագի» մեքենագիր վերջնական օրինակները): Շատ բան, ցավոք, ամենայն հավանականությամբ անդարձ կորել է:

Արխիվային նյութերը մեծապես հարստացել են Սևակի ժառանգների, հատկապես Ա. Ղազարյանի հավաքչական աշխատանքի շնորհիվ: Հավաքվել են ձեռագիր մատույններ, հոդվածներ, հրապարակումներ, հուշեր, լուսանկարներ և այլ նյութեր:

Անխաթար և ամբողջական են պահպանվել Սևակի գրականագիտական մեքենագիր (նաև ձեռագիր) տեքստերի օրինակները (և տպագրվածները, և անտիպները):

Թեմայի գիտական նորույթը պայմանավորված է հետևյալ օրինաչափություններով:

Պ. Սևակի անտիպ և անավարտ «Ամանեջ» վեպի մասին գրականագիտության մեջ գրեթե չի խոսվել: Այն հիշատակվում է Ա. Արխատկեյանի մենագրության մեջ, սակայն այդ հիշատակումը զուտ ճանաչողական-ծանոթագրական բնույթի է<sup>1</sup>: Ներկա աշխատանքում տրվում են «Ամանեջ» վեպի ստեղծման պատմությունը և ժամանակագրությունը, խոսվում է նրա մաքրագիր և սևագիր տարբերակների մասին: Անդրադարձ կա ստեղծագործության վերնագրին «Ամանեջ», որը թյուրընթերցման կամ անուշադրության հետևանքով ժամանակին կարդացվել է որպես «Ամանամեջ»: Այնուհետև, անտիպ նյութի հետ գործ ունենալու հարկադրանքից ելնելով, ներկայացվում է վեպի պուժեն գործողության վայրը, ժամանակը, հերոսները, նրանց փոխհարաբերությունները, կոնֆլիկտը:

Ատենախոսության մեջ վեպին առնչվող զանազան նյութերի ուսումնասիրման շնորհիվ փաստարկված ենթադրություններ են արվում նրա շարունակության և հեղինակի չիրականացված մտահղացումների մասին: Քանի որ վեպը պարունակում է ինքնակենսագրական տարրեր, պարզաբանվում են վավերական և գեղարվեստական մի շարք հարցեր:

«Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» ատենախոսությանն առնչվող տարատեսակ անտիպ նյութերի՝ գրառումների, նշումների, աշխատանքային տեղերի օգնությամբ ապացուցվում է, որ հակառակ գրականագիտության մեջ տարածված կարծիքի, Պ. Սևակի առաջին դիսերտացիոն աշխատությունը ամենևին էլ «համարյա վերջացած» չի եղել, այլ, ընդհակառակը, իսկապես կիսատ է մնացել:

«Մայաթ-Նովան և հայ միջնադարը»՝ Պ. Սևակի գիտական վերջին ուսումնասիրությունը, նույնպես անավարտ է մնացել: Սակայն աշխատանքային տեղերում, թերթերում առկա զանազան նյութերը հնարավորություն են տալիս հիմնավոր ենթադրություններ անելու ուսումնասիրության շարունակության մասին, նշելու, թե ինչ ուղղությամբ էր հեղինակը պատրաստվում շարունակել իր աշխատությունը: «Մայաթ-Նովան և հայ միջնադարը» (1970-1971 թթ.) ուսումնասիրության այսուհետ հասանելի դառնալու փաստով հնարավորություն է ստեղծվում ամբողջացնելու Պ. Սևակի գիտական ժառանգության ուսումնասիրությունը:

կնոջը շնորհել այնպիսի որակումներով, ինչպիսիք պատիվ կբերեին (և շնորհվում էին) նույն այդ սխալաստիկայի ու դոգմատիկայի ջատագովներին միայն. *«Կնոջը բարի և բարեսեր, մանավանդ սուրբ և անարատ համարելն ու կոչելը ինքնին և ինքնըստինքյան մի վճռական շրջադարձ է միջնադարյան մտայնության ու հոգեբանության մեջ: «Մատանեկան ծննդի» և «Ղիվային անոթ»-ի փոխարեն՝ «սուրբ և անարատ», հատկանիշներ, որոնք պատկանելիքն են ոչ թե Եվայի, այլ Աստվածածին-Սրբուհի-Բսկուհի-Մարիամի»* (Ձ., էջ 30):

Եվ այս գործընթացի շարունակությունը, ավելի ճիշտ՝ տրամաբանական շարունակությունը, անպայմանորեն պետք է հանգեցնեք «կին» և «սեր» բառերի միավորմանը (որը նույնպես միջնադարյան մտայնության արգելանքներից էր), այդ երկու բառերը կողք կողքի դնելու, դրանք միասին գործածելու թույլտվությունը:

Միջնադարում «կին» բառի ընդհանրական անունն էր «Եվա»: Պ. Սևակը ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում է հենց այս էական իրողության վրա՝ փաստելով, որ այս անգամ արդեն Հովի. Թլկուրանցին է միջնադարյան մեր այն բանաստեղծը, ով «Եվա» և «սեր» (նույնն է թե՛ «կին» և «սեր») հասկացությունները խաչաձևեց իրար: Նախ՝ Պ. Սևակը մեջբերում է Հովի. Թլկուրանցու հետևյալ քառատողը.

*Մերն<sup>18</sup> զԱդամ դրախտէն եհան,  
Յերկիր ձրգեց ւ՛արար շիւար,  
Եւ սատանի ըզնա մատնեաց,  
Որ չարչարեաց ամ վեց հազար*<sup>19</sup>... (Ձ., էջ 32)

և ապա՝ ավելացնում. *«...հայ բանաստեղծությունն ահավասիկ առաջին անգամ, Հովի. Թլկուրանցու բերանով, «Եվա»-ի փոխարեն օգտագործում է «սեր» հոմանիշը՝ մի առաջընթացային քայլ, առանց որի չէր կարող ապրել ու չէր կարող զարգանալ բանաստեղծության այն վճռական տեսակը, որ կոչվում է սիրերգություն: Ըստ որում «Եվա»-ի փոխարեն «սեր» գործածելը բառերի պատահական փոխարինություն չէ, ինչպես կարող է թվալ, այլ արդեն մարսված, ուրեմն նաև առարկություն չհարուցող ճշմարտություն: Առանց այս հանգամանքի դժվար թե միննույն տաղի մեջ միննույն միտքը կրկնվեր և այն էլ ավելի որոշակի ձևով.*

*Դու ստեղծեր զկինն ի կողէն,  
Վասն Ադամայ սիրոյն համար*<sup>20</sup> (Ձ., էջ 33-34):

Հատկապես ուշաբժան է Պ. Սևակի այն միտքը, ըստ որի՝ սա մի «առաջընթացային քայլ» է, և առանց սրա **չէր կարող ապրել ու չէր կարող զարգանալ բանաստեղծության**

<sup>1</sup> Տե՛ս Ա. Արխատկեյան, Պարույր Սևակ, Երևան, 1974, էջ 75:

<sup>18</sup> Ընդգծումը մերն է – Ս. Ղ. :  
<sup>19</sup> Հովի. Թլկուրանցի, Տաղեր, Երևան, 1960, էջ 161: **Ծանոթագրությունը Պ. Սևակինն է:**  
<sup>20</sup> Անդ, էջ 163: Տպված է այսպես՝ «Վասն Ադամայ սիրոյն համար», որ անհեթեթություն է, որովհետև հին հայերենով «վասն» նշանակում է այն, ինչ նոր հայերենով «համար»: Ձեռագրական ընթերցվածքներից մեկը «վասն»-ի փոխարեն ունի «այն», որով տողն ազատվում է անհեթեթ կրկնաբանությունից: **Ծանոթագրությունը Պ. Սևակինն է:**

նությունը: Եվ եթե նրանցից ոմանք (ինչպես օրինակ՝ Գր. Նարեկացին կամ Ֆրիկը) մնում էին սիրո հոգևոր շրջանակներում, ապա կային և այնպիսիք (ինչպես օրինակ՝ Կ. Երզնկացին), որ սերն ազատում էին «հոգևոր շղթաներից»՝ փոխադրելով այն կենդանական ու բուսական աշխարհ.

«Ուշարժան է և այն, որ Կ. Երզնկացին էլ երգի (ասել է թե բանաստեղծության կամ ընդհանրապես ստեղծագործության) թթիսմորը համարում է Սերը: Քիչ առաջ լսեցինք հարցականով տված պատասխանը Ֆրիկի.

*Թե չըկայ սեր հոգոյն ի սրտե բրդիսեալ,  
Չայս ամէն գեղեցիկ բաներն ո՛վ ասէր:*

Նույն միտքը (արդեն ոչ հարցականով, այլ հաստատապես) ասում է նաև Կ. Երզնկացին.

### **Մէ՛ր կայ յիրենք, որ կու խօսին:**

Ուրեմն՝ երգում են («կու խօսին») այն պատճառով, որ իրենց մեջ սեր կա, այլ կերպ ասած՝ միայն սիրո դեպքում է, որ երգ է ծնվում...» (Ձ., էջ 11):

Այստեղ կա մի փոքր տարբերություն. Ֆրիկը շեշտում է սիրո հոգևոր բնույթի լինելու հանգամանքը, իսկ Կ. Երզնկացին՝ ոչ: Սակայն էականը «Սեր» բառին տված այս կամ այն մակդիրները չեն, այլ **Սիրո առաջնության փաստն ինքնին**: Եվ շատ էական է Պ. Մևակի հետևյալ՝ սրանից բխող դիտարկումը. «Ինչպես տեսնում էք՝ մենք գործ ունենք միջնադարյան հայ գեղագիտության մի հիմքի հետ, որ **առայսօր չի նկատվել և ուշադրության առարկա չի դարձել**: Ըստ այսմ՝ **սերն է ստեղծագործության դրդիչ նախապայմանը**. Եթե հարցաքննող լինի՝ աստվածային (հոգեկան) սերը, իսկ եթե հարցապնդող չկա՝ պարզապես Սերը» (Ձ., էջ 11):

Ազատագրելով Սիրուն իր «հոգևոր շղթաներից»՝ միջնադարյան բանաստեղծությունը, բնականաբար, պետք է ձգտեր ազատագրելու նաև կնոջը այն ստորադրյալ ու մերժյալ վիճակից, որում նա հայտնվեց քրիստոնեական ուսմունքի տարածման ու զարգացման հետ մեկտեղ:

Եվ այս ուղղությամբ առաջին անհրաժեշտ քայլը կատարում է Կոստանդին Երզնկացին՝ գրելով «Բանք յաղագս չար կնոջ նախատինք եւ յաղագս բարի կանանց» տաղը<sup>17</sup>. «**Առաջին անգամ կինը ոչ միայն նախատվում է ու պախարկվում, այլ նաև գնահատվում է ու գովաբանվում**: Ընդդեմ **չար, անզգամ, շնացող, լեզվանի և լիրք կնոջ դրվում է բարի, բարեսեր, սուրբ, անարատ և աշխատասեր կինը**: Ըստ որում (թերևս անգիտակցաբար) եթե նա (Կ. Երզնկացին) չար կնոջ մասին խոսում է եզակի թվով («յաղագս չար կնոջ»), ապա բարիների մասին արտահայտվում է հոգնակիաբար («յաղագս բարի կանանց»): Ըստ այսմ «բարեսեր, սուրբ, անարատ» կինը արդեն ոչ թե ամենայն չարիքի արմատ է և պտուղ, այլ «իր տիրոջն է ինքը պարզն առատ»...» (Ձ., էջ 29-30):

Սա արդեն իսկ առաջընթաց էր: Չնայած միջնադարյան խստագույն դոգմատիկային ու սխալաստիկային՝ Կ. Երզնկացին հանդգնում է «ստորադրյալ ու մերժյալ»

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում ընկած են բանասիրական ու գրականագիտական մեկնաբանությունների, վերլուծությունների և համեմատությունների համադրման մեթոդը:

### **ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության հիմնադրություններն արտացոլված են ՀՀ գիտական հանդեսներում և ժողովածուներում գետեղված 4 հոդվածներում: Ուսումնասիրությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի հայ նորագույն գրականության ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

### **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու գիտական նորությունը:

### **ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ**

#### **«ԱՄԱՆԵԶ»**

«Երագում եմ գրել արձակ...», - այսպիսի խոստովանություն է անում Պարույր Մևակը 1967 թվականին տված մի հարցազրույցում<sup>2</sup>: Եվ իսկապես, ուսումնասիրելով Պարույր Մևակի դիվանի անտիպ նյութերը, սևագրերը, զանազան գրառումներն ու նշումները, այլևս կասկած չի մնում գրողի խոստովանության իսկության մեջ: Իր կյանքի ամենատարբեր շրջաններում (թե՛ 1940-ականներին, թե՛ 1950-ականներին և անգամ 1960-ական թվականներին) Պ. Մևակը ոչ միայն երագում է, այլև փորձում է իրագործել իր երագանքը (և մասամբ իրագործում է):

Պ. Մևակը «Ամանեջին» անդրադարձել է ժամանակային տևական դադարներից հետո (սկսած 1948 թվականից):

1954 թվականից արդեն Պ. Մևակը սկսում է լրջորեն աշխատել վեպի վրա: Ըստ էության վեպի կմախքը ստեղծվում է հենց այս ժամանակ: Տեքստային շարադրանքը Պ. Մևակն արդեն կատարում է ոչ թե անջատ-անջատ թերթերի վրա (ինչպես լինում էր վեպի գրության ավելի վաղ շրջանում), այլ նոթատետրերում, որոնք կրում են «Կարապետ Խաչատրյան»<sup>3</sup> ընդհանուր խորագիրը: Այսպիսի 3 նոթատետրեր են եղել նրանցից առաջինը արխիվում չկա, պահպանվել են միայն II-ը և III-ը, որոնց թերթերը հեղինակի կողմից համարակալված են:

<sup>2</sup> Ա. Ավագյան, Զանգակատունը չի լռել, «Ավանգարդ», դեկտեմբերի 14, 1967:

<sup>3</sup> Կարապետ Խաչատրյանը վեպի հերոսներից է:

<sup>17</sup> Կ. Երզնկացի, Տաղեր, էջ 216-220:

Պ. Սևակը II բլոկնոտի վրա սկսել է աշխատել 1954 թ. դեկտեմբերի 30-ից և ավարտել է այն 1955թ. հունվարի 12-ին: III նոթատետրը, սակայն, ի տարբերություն նախորդի, գրվել է շատ ավելի երկար ժամանակահատվածում՝ շուրջ 2 տարի (1955-1957 թթ.):

Ցավոք, հնարավոր չէ որոշել վեպի մաքրագրությունը սկսելու ստույգ թվականը, որովհետև մաքրագիր տեքստի ձեռագիր 149 էջերից և ոչ մեկում որևէ թվագրում չկա<sup>4</sup>: Սակայն Սևակի անտիպ նամակների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ «Ամանեջի» մաքրագիր տարբերակը հեղինակը շարադրել է 1955-ին և ինչ-ինչ պատճառներով կիսատ թողել:

Վեպի մաքրագիր տարբերակը բաղկացած է **«Առաջին մաս»-ի մուտքից և 5 գլուխներից**: Սևակը տարբերակներում այս գլուխների դասավորությունը այլ է: Մաքրագրելիս Պ. Սևակը ստեղծագործությունն ավելի արտահայտիչ, հերոսների կերպավորումը և զարգացումն առավել հետևողական և տրամաբանական դարձնելու նպատակով մի քանի ծավալուն հատվածներ և գլուխներ տեղափոխել է: Սևակից մաքրագիր անցնելով՝ վիպական տեքստը անհամեմատ ավելի շահել է, դարձել ավելի ազդեցիկ, ճկուն ու սահուն:

Վեպի սկզբնամասում հեղինակը մատնացույց է անում կատարվող դեպքերի ժամանակաշրջանը՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիները:

Կարճ անցումով հեղինակը ներկայացնում է ծավալվող գործողությունների վայրը՝ գյուղը (Ամանեջը)՝ իր աշխարհագրական դիրքով, քիչ թե շատ տեսարժան վայրերով, ուրվագծում է գյուղացիներից մի քանիսին, տալիս նրանց նիստ ու կացի, կյանքի պայմանների նկարագրությունը, նրանց մտածողության և ճանաչողության ընդհանուր սահմանները:

«Ամանեջում» գործող գլխավոր հերոսները չորսն են՝ Երանոսը, Սրբուհին, Համբարձումը, Հերիքը: Վիպական պատումի «շունչն» ու «շարժիչ ուժը» այս չորս կերպարներն են՝ նրանց փոխհարաբերությունների հոգեբանական ենթաշերտերը: Այս հերոսների ապրումների ու զգայությունների, բարդ խառնվածքների ու ճակատագրերի շերտ առ շերտ, աստիճանական բացահայտմամբ Պ. Սևակը ծավալում ու զարգացնում է վեպը, և չնայած ստեղծագործության անավարտ լինելուն՝ այդ կերպարները գեղարվեստականորեն միանգամայն կայացած ու հաջողված են, իսկ նրանց հոգեկերտվածքը՝ ամբողջական:

Գրողը, ստեղծելով իր կենտրոնական հերոսին, փորձում է նրա մեջ շեշտել ու կարևորել մի հատկանիշ, որը առաջնային է դառնում հերոսի մարդկային տեսակի, բնավորության, ներաշխարհի ձևավորման գործում:

Երանոսի պարագայում դա **մարդկայնությունն** է:

Շատերը, ճակատագրի կողմից շարունակ հալածվելով ու հարվածվելով, չարությամբ և ատելությամբ են լցվում շրջապատող աշխարհի ու մարդկանց նկատմամբ, նախանձով նայում բոլոր նրանց, ում իրենցից հաջողակ են կարծում, և առաջին իսկ հնարավորության դեպքում իրենք են հալածում ու հարվածում ուրիշներին: Սակայն քիչ չեն և այնպիսիք, որոնք, դժբախտ լինելով, չեն ուզում անպատճառ դժբախ-

<sup>4</sup> Մեջբերումները կարվեն ձեռագրի մաքրագրից, իսկ համապատասխան էջը կնշվի տեղում (օրինակ՝ Մ[աքրագիր], էջ 1):

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ «ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՆ ԵՎ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԸ»

Պ. Սևակի դիվանում պահպանվել են «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատության 204 էջանոց ձեռագիր և 201 էջանոց մեքենագիր օրինակները: Մրանք համարյա ամբողջովին նույնական են, բովանդակային որևէ տարբերություն չկա նրանց միջև: Սակայն, չնայած ընդունված կարգին, այս երկուսից վերջնականը պետք է համարել, ոչ թե մեքենագիրը, այլ ձեռագիրը: Բանն այն է, որ մեքենագիր օրինակի միայն առաջին 70 էջերի վրա է հասցրել աշխատել Պ. Սևակը. կապույտ թանաքով կետադրել է, խմբագրել, ուղղել ինչ-ինչ բացթողումներ: Դրանից հետո եկող էջերին հեղինակի գրիչը չի դիպել: Այս առնչությամբ կա Գ. Բաղդասարյանի վկայությունը, ով հաճախ էր մեքենագրում Սևակի գործերը. *«Եղբակյան հունիսի տասնյոթի նախօրեին հագիվ էի հասցրել մեքենագրել քառորդը տակավին երկու հարյուր էջ եղած իր ուսումնասիրության...»*<sup>14</sup>: Պարզ է, որ մնացած էջերը մեքենագրվել են Պ. Սևակի մահից հետո, այն էլ՝ հապճեպ, հույժ շտապողականությամբ: Նման եզրահանգման պատճառն այն է, որ մեքենագիր տեքստի այդ հատվածները լի են բազմաթիվ վրիպակներով, բացթողումներով, տարատեսակ բնույթի սխալներով (երբեմն պայմանավորված Պ. Սևակի ձեռագրի թյուրընթացմամբ), որոնք հանդիպում են մեքենագիր օրինակի գրեթե ամեն մի էջում, բայց չկան ձեռագիր օրինակում:

Գ. Բաղդասարյանը՝ ուշիմ ու բանիմաց մտավորականը, այդքան անփույթ լինել չէր կարող: Երևի շտապել է մեքենագրել ու վերադարձնել օրինակները Սևակի ժառանգներին: Այլ բացատրություն չկա<sup>15</sup>:

«Սայաթ-Նովան և հայ միջնադարը» հետազոտության գլուխների թիվը երեքն է (թեպետ ծրագրված էր շատ ավելին): Մրանցից միայն առաջին երկուսն են ավարտուն (III գլուխը՝ *«Մերը և իր արտահայտությունները»*, կիսատ է, գրվել է 4 էջ միայն՝ ձեռագրի 201-204 էջերը): Ըստ այսմ՝ դիտարկման ենթակա են ուսումնասիրության I և II գլուխները, որոնք համապատասխանաբար վերնագրված են՝ *«Մերը և իր առաջնությունը»* և *«Հոգու և մարմնի ներհակությունը»*:

Սևակագետ (կամ սայաթնովագետ) ուշադիր ընթերցողին *«սերը և իր առաջնությունը»* արտահայտությունը պետք է ծանոթ թվա, ինչ-որ բան հուշի... Ընթերցողի և այս արտահայտության թռուցիկ ծանոթությունը սկսվել է դեռևս «Սայաթ-Նովա» գրքից, որտեղ Պ. Սևակը մի որոշ հատված է նվիրում այս թեմային<sup>16</sup>: Իսկ «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատության մեջ, **սիրո առաջնության** շուրջ մտորումները զարգանալով, դառնում են գեղագիտական հայեցակարգ: Թեման դադարում է հատվածական բնույթ կրել՝ վերածվելով մի ամբողջական գլխի:

Պ. Սևակը մի շարք օրինակներով ցուցանում-ապացուցում է, որ հայ միջնադարյան բանաստեղծները ևս ոչ միայն ընդունում էին, այլ, մինչևիսկ, պնդում էին սիրո առաջ-

<sup>14</sup> Պարույր Սևակը... հուշագիրների ափի մեջ, կազմողներ՝ Ն. Հովսեփյան, Շ. Պետրոսյան, Երևան, 2006, էջ 241 (ընդգծումները մերն են – Ս. Ղ.):

<sup>15</sup> Այդ իսկ պատճառով մեջբերումներն արվելու են ձեռագրից՝ համապատասխան էջի նշումով (օրինակ՝ Ձ[եռագիր], էջ 1):

<sup>16</sup> Պ. Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, 1969, էջ 137-148:



դեպքում նույնիսկ (ինչպես Իսկական Շապուհի տոհմագրությունը պարզելու հարցերում) Պ. Սևակը համարձակորեն մերժում-հերքում է նախորդների դրույթները, սակայն այն կարևոր նախապայմանով, որ այդ ժխտում-հերքումը կատարվում է բացառապես գիտական հիմքի վրա, բանասիրական ճշգրիտ ապացույցների ու փաստարկների առկայության դեպքում միայն: Դեռ ավելին՝ հատկապես Կարծեցյալ Շապուհի ժամանակի հարցը որոշելու մեջ Պ. Սևակը շատ ավելի էր առաջ գնացել և շատ ավելիին էր հասել, քան որևէ մեկը՝ այդպիսով նաև միանգամայն արդարացնելով ցանկացած դիսերտացիոն աշխատության առաջնային առաքելությունը, այն է՝ գիտական նորություն, նոր խոսք ասելը:

Ըստ այսմ՝ «Կարծեցյալ Շապուհ...»-ը նույնիսկ ներկայիս վիճակում թույլ է տալիս պնդելու, թե բանասիրության մեջ, թեկուզ և փոքր, բայց նոր էջ է բացվել:

Սակաձի ապացույցը կարող է լինել Պ. Սևակի «Կարծեցյալ Շապուհ...»-ի համեմատությունը արդեն ոչ թե իրենից առաջ եղած հրապարակումներին, այլև 1945-1948 թվականներից հետո գրված և նույն թեմային նվիրված գրական անդրադարձների հետ:

Այդ անդրադարձներից ուշադրության արժանի է Մ. Դարբինյան-Մելիքյանի աշխատությունը (տե՛ս «Պատմություն Անանուն գրուցագրի», թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երևան, 1971)<sup>13</sup>:

Այս համեմատությունը, ինքնին առաջ բերելով մի քանի վիճահարույց բանասիրական հարցեր, որոնք կարոտ են ապագա ճշգրտումների, հաստատում է, որ Պ. Սևակն իր բանասիրական փնտրտուքներում միանգամայն ճիշտ ուղղությամբ էր շարժվում: Այսպես՝ Կարծեցյալ Շապուհի «Պատմության» ժամանակի հարցը պարզաբանելիս Մ. Դարբինյանը այնպիսի փաստարկներ է վերհանում, որ չէր նկատել նախորդ բանասերներից ոչ ոք բացի Պ. Սևակից:

«Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» անավարտ աշխատությունը, նույնիսկ բավական թերի վիճակում, մեծ հետաքրքրություն է ներկայացնում առավելապես երկու տեսանկյունից:

Նախ՝ այս աշխատությունը կարող է առիթ լինել բանասերների և գրականության պատմաբանների համար ևս մեկ անգամ ուշադրություն դարձնելու Կարծեցյալ Շապուհի «Պատմությանը», փորձելու առավել հանգամանորեն քննել ու մեկնաբանել այն, հնարավորինս սպառիչ պատասխաններ տալ բանասիրական և գրականագիտական մի շարք էական հարցերի, որի անհրաժեշտությունը մինչ օրս առկա է:

Եվ երկրորդ՝ սույն աշխատությունը գրական հասարակայնությանը այսուհետ հասանելի դառնալու փաստով կարող է թույլ տալ Պ. Սևակի գիտական ժառանգությունը ուսումնասիրողներին առավել ամբողջական պատկերացում ունենալ նրա անցած գիտական ճանապարհի վերաբերյալ:

<sup>13</sup> 1981թ-ին Կարծեցյալ Շապուհի թեմային անդրադարձել է նաև Լևոն Բաբայանը՝ անելով սակայն ոչ ավելին, քան վերապատմելով Մ. Աբեղյանի և Մ. Դարբինյանի այս առթիվ հայտնած տեսակետները (Լ. Բաբայան, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XIII դարեր), «Անանուն գրուցագիր» հոդվածը, Երևան, 1981, էջեր 100-110):

տացնել կամ դժբախտ տեսնել մյուսներին: Ընդհակառակը՝ նրանք կարծես որքան շատ են տառապում, այնքան ավելի կարեկցանքով ու գործով են լցվում այլոց նկատմամբ:

Երանոսը այս վերջինների թվին է պատկանում: Նա առանձնանում է մարդուն օգնելու, նրա համար ճիգ ու ջանք չնայելու պատրաստակամությամբ, իր հանդեպ գործած չարությանը չպատասխանելու, իսկ բարությանը առավել մեծ բարությամբ փոխհատուցելու ապրելաձևով:

Պարույր Սևակը ստեղծել է մի կերպար, որը թեպետ և զուրկ է **տղամարդկային** շատ գծերից. սեռական խնդրից բացի Երանոսը չունի նաև համառություն, հաստատակամություն, երբեմն նույնիսկ նրան պակասում է խոսելու հասարակ քաջությունը, բայց միևնույն ժամանակ օժտված է **մարդկային** բարձր որակներով (բարություն, խանդաղատանք, գթություն, պարզերեսություն, անկեղծություն). *«Ինչ ուրիշներին թվում էր անտանելի, Երանոսը տանում էր ոչ թե նրա համար, որ մարդ չէր, ինչպես մտածում էին բոլորը, այլ այն պատճառով, որ մարդ էր»*<sup>5</sup> (Մ., էջ 99):

Երանոսի կերպարը առանձնահատուկ ու հետաքրքիր է ևս մեկ կողմով. նրա մարդկայնությունը ստուգապես «գիտակցված», բանական է: Ֆիզիկական տհասությունը ոչ մի կերպ չի խանգարում նրա մտավոր հասունությանը: Այսինքն՝ Երանոսի բարությունը «դատարկ տեղից» չի ծնվում, ինչպես հաճախ լինում է արատավոր, խեղված, մտախանգարված մարդկանց մոտ, որոնք բարի և անվնաս են ընտանի կենդանիների պես: Երանոսը պարզ տեսնում ու հասկանում է, թե ով է իր թշնամին և ով՝ բարեկամը, հստակ տարբերում է սևը սպիտակից: Առողջ ու սթափ դատողության տեր մի մարդ է նա:

Երանոսի արժանիքներին պետք է ավելացնել ևս մեկը՝ **սերը**:

Խոսքը ոչ միայն բարությունից բխող սիրո մասին է (սեր առ մերձավորը), այլև այն սիրո, որ տածում են կնոջ հանդեպ:

Երանոսից խլված է տղամարդկային-առնական սիրո կիրառման հնարավորությունը, բայց միևնույն ժամանակ պահպանված է այդ սերը զգալու, ապրելու կարողությունը: Նա այդ սերը զգում, մինչևիսկ վայելում է ոչ միայն իբրև մարդ, այլ նաև իբրև տղամարդ (սա նման է այն զգացողությանը, երբ մարդ ոտքերը կորցնելով՝ չի կորցնում քայլելու զգացողությունը): Պարույր Սևակը, որն իր պոեզիայում այդքան սիրառատ և սիրագետ է, մատուցում է սիրո ևս մեկ արտահայտություն. այն ո՛չ պլատոնական, ո՛չ էլ մարմնական է, այն, էթե կարելի է այդպես ասել, **«անսեռ սեր»**: «Անսեռ», որովհետև չունի «մարմին»՝ միս ու արյուն չի դառնում, բայց և՛ «սեր», որովհետև խորապես ապրվում ու զգացվում է: Միրո նմանօրինակ պատկերումը իր կրկնակը չունի հայ գրականության մեջ:

Հայ (մանավանդ արևելահայ) գրականության մեջ, անգամ ռեալիստական ստեղծագործություններում, կիրք հաճախ պատկերվել է երկու իրարամերժ ռոմանտիկ մտեցումներից որևէ մեկով:

Մի դեպքում նա լիովին համապատասխանում է «իսկական» հայ կին կոչվելու բոլոր «ավանդական» պահանջներին. առաքինի է, խելացի, ազնիվ, մարմնապես և բարոյապես անբասիր, սիրում է անպայման միայն մեկ տղամարդու և ապրում է միմիայն այդ տղամարդու հետ, իսկ եթե ինչ-ինչ պատճառներով նրանց համատեղ

<sup>5</sup> Առաջին գլխում հեղինակից արված մեջբերումներում առկա ընդգծումները մերն են – Ս. Ղ.:

կյանքը հնարավոր չէ, ապա այլևս ոչ մեկի հետ որևէ կերպ չի կապվում (բացի, թերևս, բռնի պարտադրանքից) : Մա հայ կնոջ, այսպես ասած, «դրական», «ընդունելի» տիպն է:

Երկրորդ դեպքում հայ կինը ներկայանում է որպես խորամանկ ու խարդախ, անսիրտ ու դաժան, հաշվենկատ և անազնիվ, սեթևեթող ու պազոտ, բարոյապես ապականված նկարագրով: Մա էլ հայ կնոջ «բացասական», «մերժելի» տիպն է:

Պարույր Սևակի Սրբուհին (Երանոսի կինը) հիշված երկու տիպերին բնորոշ տարբեր հատկանիշների խաչաձևման և միաձուլման արդյունք է: Մրանով էլ այս կերպարը ձեռք է բերում յուրահատուկ հմայք ու ձգողականություն:

Այդուամենայնիվ, Սրբուհու կերպարի հիմքում ընկած է չափազանց պարզ, բայց ոչ պարզունակ, մի իրողություն՝ կնոջ (և ընդհանրապես մարդու) ամենամեծ դժբախտությունը՝ կորսված, խաթարված սերը: Եթե նրա կյանքում չլինեին այդ դժբախտ սերը և դրա հետևանքով առաջ եկած բոլոր ողբերգական իրադարձությունները, միգուցե Սրբուհու մասին խոսելիս էլ կարելի կլիներ սահմանափակվել առաջին տիպի կանանց բնորոշմամբ: Բայց ողբերգական սիրտ և նման տխուր ճակատագրի նա արժանանում է ոչ թե բախտի ինչ-որ դաժան քմահաճույքի, այլ իր բնատուր ըմբոստ և ազատամիտ խառնվածքի պատճառով: Սիրելով մեկին, ում **արգելված** էր սիրել, «Սրբուհին թքել է աշխարհի, նրա կարգ ու կանոնի՝ այդ նամուս ու ադաթ կոչվածի վրա: Որ դա իրոք այդպես է՝ վկա գերեզման դրած նրա սերը: Եթե այդպես չլիներ, եթե Սրբուհին հաշվի նստեր աշխարհի, նրա կարգ ու կանոնի հետ, նա չէր հասնի այս վիճակին, նա չէր դառնա աշխարհի ամենադժբախտ կինը» (Մ., էջ 103): Այսպիսով, Սրբուհին մի կին է, որ մյուսներից տարբեր է ոչ միայն իր չքնադագեղ արտաքինով, այլև համարձակությամբ, յուրովի մտածելակերպով:

Պարույր Սևակը իր հերոսուհուն էրբեք չի իդեալականացնում. Սրբուհին դավաճանում է Երանոսին, և դավաճանությունը մնում է որպես մի անջնջելի փաստ:

Հանձին Համբարձումի՝ Պ. Սևակը ստեղծել է ավանդապաշտ, խստահայաց, արժանապատվության ուրույն զգացումով ու գիտակցությամբ լեցուն, կյանքում իր տեղն ու դիրքն իմացող և դրանք բարձր գնահատող հայ տղամարդու կերպար: Այն նույն հայ տղամարդու, որ գրեթե էրբեք չի տրվում քնարական-հուզական զեղումների, զերծ է երազային մտորումներից: Մառնարյուն խառնվածք ունենալով՝ Համբարձումը հազվադեպ է որևէ մեկի հանդեպ սրտագին ու ջերմառատ վերաբերմունք ցուցաբերում. քնքշությունն ու նրբանկատությունը օտար են նրան:

Կանանց հարցում Համբարձումն առավել քան պահպանողական է. նրա հայացքը վայրկյան իսկ կանգ չի առնում Ամանեջի կանանցից և ոչ մեկի վրա... Եվ սա այն դեպքում, երբ ինչպես հարստությամբ, այնպես էլ արտաքինով՝ տղամարդկային գրավչությամբ Համբարձումը գերադասելի է իր հասակակիցներից շատ-շատերից, այն դեպքում, երբ իր և կնոջ միջև գոյություն ունեն բազմաթիվ տարաձայնություններ: Խնդիրը կրկին զուտ Համբարձումի տեսակի մեջ է. «*Երկու կարգի տղամարդիկ կան. ոմանք սիրում են կանանց՝ սիրելով նրանց թուլությունը, ոմանք արհամարհում են նրանց՝ նույն այդ թուլության համար*» (Մ., էջ 81): Համբարձումը պատկանում է վերջինների թվին: Ընդհանրապես ցանկացած թուլություն (կանացի թե տղամարդկային, հոգեկան թե ֆիզիկական) արհամարհելի է նրա համար, որովհետև ինքն իր էության կարծես անխոցելի է, հեռու ամեն տեսակ թուլություններից:

Եվ ահա, մեր առջև մի աշխատություն է, որտեղ **բացակայում է նրա «զխավոր նպատակը»**՝ Կարծեցյալ Շապուհի «Պատմության» «*դիտումը... արևելյան վաղ ռենեսանսի շղթայի մեջ*»: Հնարավոր է արդյոք պնդել մի աշխատության «համարյա պատրաստի» լինելը, եթե նրա հիմնական, առաջնային նպատակը իրագործված չէ:

Վերջապես, ընդդեմ «Կարծեցյալ Շապուհ...»-ի «համարյա վերջացված» լինելուն, խոսում է ևս մեկ փաստ: Դիսերտացիային առնչվող աշխատանքային թերթերից մեկում Պ. Սևակը կազմել է գրվելիք ուսումնասիրության պլան-ծրագիրը՝ բաժանելով այն համապատասխան գլուխներին:

*Գլ. Ա - Բուն և Կարծեցյալ Շապուհիների հարաբերությունը:*

*Գլ. Բ - Կարծեցյալ Շապուհի «Պատմության» ժամանակը:*

**Գլ. Գ - Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը» և «Հացուկաց խաչը»:**

*Գլ. Դ - Կարծեցյալ Շապուհի «Պատմության» ժամանակաշրջանը:*

*Գլ. Ե - Կարծեցյալ Շապուհի պատմական ժամանակաշրջանը:*

**Գլ. Զ - Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը» {արտահայտություն} հայկական վաղ ռենեսանսի:**

**Գլ. Է - Հայկական վաղ ռենեսանսի մյուս արտահայտությունները<sup>12</sup>:**

Սույն պլան-ծրագիրը, ինչպես տեսնում ենք, բաղկացած է 7 գլուխներից: «Կարծեցյալ Շապուհ...»-ի ներկա օրինակը իր բովանդակությամբ հարաբերվում է (այն էլ ոչ լիարժեքորեն) այս 7 գլուխներից միայն 4-ին (Ա, Բ, Դ, Ե), իսկ մնացած 3 գլուխները (Գ, Զ, Է) պլան-ծրագրի վերնագիր լինելուց այն կողմ չեն անցել, այսինքն՝ այդպես էլ չեն վերածվել տեքստային շարադրանքի: Եվ ուրեմն, արդյոք կարելի է խոսել որևէ աշխատության «համարյա պատրաստի» լինելու մասին, եթե նրանում **ծրագրված յոթ գլուխներից միայն չորս են գրվել** և դեռ այստեղ էլ չեն հասցվել վերջնակետի:

Այս բաժնում առաջ քաշված դրույթները միասին վերցված գալիս են ապացուցելու, որ, **հակառակ գրականագիտության մեջ տարածված կարծիքի՝ «Կարծեցյալ Շապուհ...»-ը ամենին էլ «համարյա վերջացած» չէ:** Եվ եթե ինքը՝ Պ. Սևակը, կարող էր խոսել իր աշխատանքի մոտալուտ ավարտման կամ պատրաստի լինելու մասին, քանզի բնականաբար ասելիքն ամբողջությամբ արդեն ձևավորված էր, ապա Պ. Սևակի գրական ժառանգությունը ուսումնասիրողները նույնը անել չեն կարող, որովհետև նրանք պարտավոր են նման եզրակացության հանգել միմիայն փաստերի առկայության դեպքում: Իսկ փաստերը, ինչպես տեսանք, վկայում են «Կարծեցյալ Շապուհ...»-ի ոչ թե «համարյա պատրաստի» լինելը, այլ, ընդհակառակը, իսկապես կիսատ մնալը:

Նախքան Պ. Սևակը Կարծեցյալ Շապուհի «Պատմությունը» անդրադարձել են շատ անվանի գիտնականներ (այդ թվում՝ Ն. Ալիկյան, Յ. Մարկվարտ, Թ. Ավդաբեգյան, Մ. Աբեղյան): Նրանց ուսումնասիրությունների և Պ. Սևակի աշխատության համեմատության արդյունքում պարզ է դառնում, որ երիտասարդ ասպիրանտ Պ. Ղազարյանը իր բանասիրական դիտարկումներում առնվազն չէր զիջում իր նախորդներին: Հարկ եղած

<sup>12</sup> Քառակուսի փակագծերի մեջ են առնվել այն բառերը, որոնք հեղինակը կրճատ է գրել: Իսկ համակարգաձև փակագծերի մեջ առնվել են այն բառերը, որոնք դժվարընթեռնելի են և ենթակա հետազոտ փոփոխման - Ս. Ղ.:

Արիստակեսյանն իր աշխատության մեջ նկատում է, թե Պ. Սևակը *«համարյա վերջացրել էր «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» մենագրությունը»*<sup>10</sup>: Այսպես տարածվում է *«համարյա վերջացրած»* լինելու վարկածը:

Ժամանակի ընթացում միգուցե հայտնաբերվի (որը գրեթե անհավանական է) «Կարծեցյալ Շապուհ...»-ի մեկ այլ, շատ ավելի ամբողջական տարբերակ: Բայց առկա օրինակը դժվար է բնորոշել որպես *«համարյա վերջացած»*, ընդհակառակը՝ այն իսկապես անավարտ է (նույնիսկ կարելի է ասել՝ կիսատ է):

Ամենից առաջ հարկ է ուշադրություն դարձնել աշխատության վերնագրին՝ *«Կարծեցյալ Շապուհը և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում»*: Ինչպես տեսնում ենք, վերնագիրը կազմված է երկու հավասարաթեք կետերից: Ըստ այդմ՝ միանգամայն տրամաբանական է ենթադրել, որ աշխատության բովանդակությունը պետք է առնչվի և՛ Կարծեցյալ Շապուհին, և՛ Հայաստանում վաղ վերածննդի հարցերին: Մինչդեռ աշխատության առկա օրինակը բացառապես խոսում է Կարծեցյալ Շապուհին վերաբերող խնդիրների շուրջ և դեռ այստեղ էլ իր վերջնական ավարտին չի հասնում: Փաստորեն վերնագրի ընդգծված մասի քննությունը ընդհանրապես բացակայում է աշխատության մեջ:

Վերնագրի ընդգծված մասը կարևորություն է ձեռք բերում մեկ այլ առումով ևս: Մրա բովանդակության բացակայությամբ Պ. Սևակի աշխատությունը գրկվում է իր **գրականագիտական** կողմից: Ներկա օրինակում Կարծեցյալ Շապուհին վերաբերող բոլոր հարցերը կրում են բացառապես **բանասիրական** բնույթ: Մինչդեռ վստահաբար կարելի է պնդել, որ Պ. Սևակի դիսերտացիոն ուսումնասիրությունը պետք է շոշափեր ինչպես բանասիրական, այնպես էլ գրականագիտական հարցեր:

Այդ է վկայում հենց ինքը՝ Պ. Սևակը: Իր աշխատության «Առաջաբանում», խոսելով նախորդների կատարած գործի մասին ընդհանուր առմամբ, Պ. Սևակը դժգոհում է, որ նրանք, պարզելով *«Կարծեցյալ Շապուհի և Շապուհ Բագրատունու Պատմությունների ոչ նույնականությունը, հերքելով նորահրատ գրքի հրատարակիչների վարկածը»*, այսքանով խնդիրը փակված են համարում՝ *«բոլորովին ձեռք չտալով կամ համարյա ձեռք չտալով գրքի բովանդակությանը, քննության չառնելով այն ըստ էության»*: *«Այստեղ ևս, - շարունակում է Պ. Սևակը, - երևան է գալիս մեր տրադիցիոն բանասիրության օրգանական բացերից մեկը. բանասիրական մանրութների փնտրտուքի հարուցած ոգևորության մեջ շատ հաճախ այջաթող անել երկի, տվյալ գրական-պատմական հուշարձանի գնահատությունը՝ ըստ բովանդակության, ըստ ոչ միայն պատմագրական (նեղ առումով), այլև ըստ պատմական-գրական արժանիքների»* (էջ 2):

Սույն «Առաջաբանում» քիչ անց Պ. Սևակը նշում է. *«Քննարկվող երկի դիտումը կոնկրետ պատմա-հասարակական Ֆոնի վրա և նրա գնահատումը իբրև գերազանցապես գրական հուշարձանի՝ արևելյան վաղ ռենեսանսի շրջայի մեջ, - ահա մեր գլխավոր նպատակը»*<sup>11</sup> (էջ 4):

Այսպիսի կերպար է ստեղծել Պ. Սևակը, այսպիսին է մեզ ներկայանում Համբարձումը սկզբում: Բայց Սրբուհին ամեն ինչ փոխում է նրա կյանքում:

Կան մարդիկ, ովքեր ապրում են հավասարակշռված, միատարր, անխաթար ռիթմով: Կյանքի ճանապարհն անցնելիս թե՛ առօրյան, թե՛ դժվարությունները նրանք հաղթահարում են շարժման միևնույն արագությամբ, քայլքի միևնույն չափով՝ դանդաղ, կշռադատված, նախօրոք մտածված, և այդ «քայլքը» երբևէ «վազք» չի դառնում, կամ չի վերածվում «սայթաքման»: Այդպիսի մարդիկ մշտապես գիտեն, թե վաղն ինչ է լինելու, և իրենք ինչ են անելու:

Այսպիսին էր նաև Համբարձումը... մինչև Սրբուհուն հանդիպելը: Սակայն այդ հանդիպման տպավորությունները աստիճանաբար ծավալվելով ու ներթափանցելով նրա հոգեկան աշխարհի ի վերջո վերածվում են սիրո, իսկական սիրո. մի զգացմունք, որը մինչ այդ, երբևէ չէր այցելել Համբարձումին:

Հաջողված է նաև Հերիքի՝ Համբարձումի կնոջ կերպարը: Նրա դժբախտության պատճառն առաջին հերթին սեփական խառնվածքի մեջ է, ավելի ճիշտ՝ խառնվածքի գրեթե իսպառ բացակայության մեջ. *«Անտարբերությունն ու հանգստությունը եթե հոտ ունենային, կուներնային Հերիքի հոտը»* (Մ., էջ 68): Միանգամայն կամազուրկ և ամեն ինչի հանդեպ անտարբեր լինելու հետևանքով նա մշտապես տուժում է կամ խիստ պատժվելով (ամուսնու հարազատների դաժան վերաբերմունքից), կամ ոչ մեկի կողմից լրջորեն չընդունվելով (ամբողջ Ամանեջում միայն Սրբուհին է, որ առանց հեզմանքի է շփվում նրա հետ). *«Հերիքին տհաս էին համարում բոլորը»* (Մ., էջ 70):

Հանրագումարի բերելով կենտրոնական հերոսների վերաբերյալ ասվածը՝ պարզորոշ է դառնում, որ նրանց միավորում-կապում է մեկ հատկանշական իրողություն՝ **բոլորն էլ յուրովի դժբախտ են, բոլորի ճակատագրերը յուրովի ողբերգական են**:

Մարդու երջանկության կարևորագույն նախապայմանը կյանքի անցնելիք ճանապարհին գուզընկեր, կողակից գտնելն է: Վեպի չորս կենտրոնական հերոսների ողբերգությունը այդ փնտրտուքի անհաջողության մեջ է:

Երանոսը թեև կարծես հասել է նպատակին (**ապրում է նրա հետ, ում սիրում է**), սակայն դժբախտ է այնքանով, որ ի վիճակի չէ համադրելու սիրո հոգեկան և մարմնական միաժամանակյա դրսևորումները, բացի այդ՝ նա երբևէ չի կարող ակնկալել իր զգացմունքներին համարժեք փոխադարձություն (**ապրում է մեկի հետ, ով իրեն չի սիրում**): Սրբուհին ընդհանրապես գրկված է սիրուց՝ սիրո առարկայից, բայց ոչ զգացմունքից, որն առավել խորացնում է ողբերգությունը (**սիրում է մեկին, ով մեռած է**): Բայցևայնպես, երեխայի ծնունդով, որ իմաստ է հաղորդում Սրբուհու կյանքին, և Սրբուհու՝ Երանոսի նկատմամբ ունեցած ջերմ ու սրտամտ վերաբերմունքով, որ հնարավոր է դարձնում նրանց համատեղ գոյակցությունը, այս գույզի հետագա կացությունը նվազ անմխիթար է պատկերացվում, քան Համբարձումի և Հերիքի դրությունը: Մրանցից առաջինը՝ Համբարձումը, **սիրում է մեկին (Սրբուհուն), ով մշտապես անհասանելի է մնալու իրեն** և բացարձակապես անհաղորդ է իր զգացմունքներին: Իսկ Հերիքից ի բնե կարծես **խլված է սիրելու ընդունակությունը**:

«Ամանեջ» վեպում Պ. Սևակը համարձակորեն օգտվում է ժողովրդական բանահյուսությունից:

<sup>10</sup> Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, էջ 99 (ընդգծումը մերն է – Ս. Ղ.):

<sup>11</sup> Ընդգծումը մերն է – Ս. Ղ. :

«Ամանեջ» վեպը պարզորոշ ցույց է տալիս, թե որքան գիտակ և քաջատեղյակ է Պ. Սևակը 20-րդ դարասկզբի հայ «հասարակական կյանքին», այդ «կյանքի տարբեր երևույթներին»: Հետևանքն այն է, որ մաքրագիր տեքստի 149 էջերում ներառված են ավելի քան... **100** առած-ասացվածքներ (այն դեպքում, երբ մինչև այժմ տպագրված սևակյան ամբողջ արձակ խոսքում դրանց թիվը կազմում է ընդամենը 168 <sup>6</sup>):

Պետք է նկատել, որ գյուղական կոլորիտի պատկերումը և գեղարվեստական վերարտադրումը Պարույր Սևակը կատարում է գրեթե փաստագրական ճշգրտությամբ: Նա մանրամասն տեղյակ է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գյուղացու սովորույթներին ու ադաթներին, **եկեղեցական տոնացույցին** (որ էական դեր էր խաղում գյուղացու կյանքում), **հագուստի տեսակներին**, գյուղացու կողմից բժշկական նպատակներով օգտագործվող զանազան **խոտաբույսերին**, անգամ գյուղական բազմապիսի **ճաշատեսակներին**: Այս առումով Պ. Սևակի իմացությունները զարմանալի և նախանձելի խորության ու նվաճումների են հասնում: Հավաքված հսկայական նյութը, որ գտնում ենք սևագրային գրառումներում, ծոցատեսքերում ու բլոկնոտներում ևս մեկ անգամ ստուգապես վկայում են գրողի աշխարհաճանաչողության լայնածավալ սահմանների մասին:

Պ. Սևակը ծրագրել էր մեծածավալ մի ստեղծագործություն գրել, որն իր էպիզոդով և վիպականությամբ կարող էր դասվել հայ գրականության այնպիսի ստեղծագործությունների շարքին, ինչպիսիք են Եղ. Չարենցի, Ավ. Բասիկյանի, Ալ. Բակունցի վեպերը:

Ստահողացումը չիրականացավ: Բայց անգամ եթե իրականացվեր էլ՝ «Ամանեջը» ավարտին հասցվեր՝ ընդգրկելով պատմական այն ժամանակաշրջանը (1910-ական թվականներից մինչև 1930-ականներ), որ ծրագրել էր հեղինակը, ապա հազիվ թե խորհրդային իրականությունը թույլատրեր նրա լույս աշխարհ գալը (ինչպես, ասենք, եղավ հենց նույն «Ուստա Կարո»-ի դեպքում): Պ. Սևակը ամենևին չէր պատկանում խորհրդային այն գրողների թվին, ովքեր պետական գաղափարախոսությունը գերադասում էին պատմական ճշմարտությունից: Իսկ պատմական օբյեկտիվ ճշմարտությունը մշտապես խեղաթուրվել ու կեղծվել է խորհրդային իշխանությունների կողմից: Հետևաբար և «Ամանեջը», լավագույն դեպքում, արժանանալու էր «Եղիցի լույսի» ճակատագրին՝ հեղինակի կենդանության օրոք այդպես էլ լույս չտեսնելով:

Այդուամենայնիվ, նույնիսկ անավարտ վիճակում, «Ամանեջը» նոր էջ է բացում Պարույր Սևակի գրականության մեջ, այն է՝ գեղարվեստական **արձակի էջ**:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐ

### «ԿԱՐՇԵՅՅԱԼ ՇԱՊՈՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՎ ՎԱՂ ՎԵՐԱՇՆՆՐԻ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Երիտասարդ հասակից արդեն Պ. Սևակ մարդու մեջ գրող-բանաստեղծին զուգընթաց ապրում և զարգանում է գրականագետ-գիտնականը: Այժմ, երբ ուսումնասիրվում է Պ. Սևակի անտիպ ժառանգությունը, սույն դիտարկումը գնալով ավելի պարզություն և

<sup>6</sup> **Ա. Մարգարյան**, Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 2010, էջ 230:

հստակություն է ստանում: Եվ ինչպես հնարավոր է հետևել Պ. Սևակ գրող-բանաստեղծի ստեղծագործական աճին ու առաջընթացին, ճիշտ այդպես էլ տեսանելի է Պ. Սևակ գրականագետի անցած գիտական ճանապարհը: Գրական այս երկվությունը, արվեստագետի այս երկբևեռությունը Պ. Սևակը պահպանում է մինչև իր կյանքի վերջը:

*«1945 թվականին գերազանցության դիպլոմով ավարտելով Երևանի պետական համալսարանը՝ Պարույր Սևակը ընդունվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան հայոց հին ու միջնադարյան գրականության մասնագիտությամբ՝ դառնալով այնպիսի հմուտ հայագետի ու խստապահանջ դասախոս-գիտնականի սան, ինչպիսին էր Կարո Մելիք-Օհանջանյանը...»*, - կարդում ենք Ա. Արիստակեսյանի մենագրության մեջ<sup>7</sup>:

Հայոց հին և միջնադարյան գրականությունը մշտապես եղել է Պ. Սևակի ուշադրության կենտրոնում և նրա գրական նախասիրությունների շարքում զբաղեցրել է առաջնային տեղ:

Ըստ այդմ էլ ստեղծագործության համար ընտրվում է «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» թեման:

Պ. Սևակի տնային արխիվում պահպանվել է «Կարծեցյալ Շապուհ...»-ի մեկ օրինակը միայն: Սույն օրինակը, որ ձեռագիր է, շարադրվել A4 ֆորմատի թղթերի վրա, համարակալված է հեղինակի կողմից և կազմում է 110 էջ<sup>8</sup>: Աշխատանքային թղթերի մեջ երբեմն պատահում են «Կարծեցյալ Շապուհ...»-ից հանված առանձին սևագիր թերթեր՝ նույնպես համարակալված: Սա նշանակում է, որ որոշ թերթերի բովանդակությունը հեղինակին դուր չի եկել և նա վերաշարադրել է դրանք:

Ներկա օրինակը «աշխատանքային», «սևագրային» բնույթի է: Այս ենթադրությունը հաստատվում է ոչ միայն աշխատության կիսատ լինելով, այլև նրանում առկա մի քանի ոչ այնքան էական (և հեշտությամբ վերականգնելի) անճշտություններով՝ կապված պատմական ինչ-ինչ թվականների անհամապատասխանության, երբեմն հանդիպող կրճատ գրված բառերի, քերականական անհարթությունների հետ, որն անկասկած խոսում է տեքստի վերջնական մշակման բացակայության մասին:

«Կարծեցյալ Շապուհ...»-ը բաղկացած է *«Առաջարևն»*-ից, *«Ներածական»*-ից և երկու գլուխներից, որոնցից առաջինը վերնագրված է *«Ճշմարիտ և Կարծեցյալ Շապուհների հարաբերություն հարցը»*, իսկ երկրորդը՝ *«Կարծեցյալ Շապուհի ժամանակը»*: Ըստ որում՝ այս երկրորդ գլուխը նույնպես անավարտ է մնացել:

«Կարծեցյալ Շապուհ...»-ի որևէ այլ ամբողջական տարբերակ՝ (ո՛չ ձեռագիր, ո՛չ մեքենագիր) Պ. Սևակի արխիվում չկա: Այս հանգամանքը շեշտվում է հատկապես այն պատճառով, որ գրականագիտության մեջ, մասամբ հենց Պ. Սևակի մեղքով, կարծիք է ստեղծվել, թե իր դիսերտացիոն առաջին աշխատությունը Պ. Սևակը «համարյա թե ավարտել էր»: Այս մասին նախ խոսում է ինքը՝ հեղինակը. «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրության մեջ ասպիրանտական տարիները հիշելիս Պ. Սևակը գրում է. *«համարյա վերջացրել էի դիսերտացիոն մենագրությունը...»*<sup>9</sup>: Ավելի ուշ Ալբերտ

<sup>7</sup> **Ա. Արիստակեսյան**, Պարույր Սևակ, Երևան, 1974, էջ 76:

<sup>8</sup> «Կարծեցյալ Շապուհ...»-ից մեջբերումներ անելիս համապատասխան էջերը կնշվեն տեղում:

<sup>9</sup> **Պ. Սևակ**, Անցյալը ներկայացած, կազմեցին, խմբագրեցին և ծանոթագրեցին Ա. Ղազարյանը և Ս. Ղազարյանը, Երևան, 2011, էջ 23 (ընդգծումը մերն է – Ս. Ղ.):

исследуется и представляется содержание и ценность первого серьезного филологического труда П. Севака. На основе сопоставленных фактов и сделанных умозаключений, можно настаивать, что вопреки распространенному в литературоведении мнению, диссертационная работа П. Севака “Псевдо- Шапук Багратуни и вопросы раннего ренессанса в Армении” вовсе не “почти готова”, а действительно половинчата. Сравнительно-сопоставительный метод позволяет утверждать, что П. Севак в своем незавершенном исследовании – “Псевдо- Шапук ...” двигался в верном направлении, замечая и указывая на такие научные факты, которые ускользнули от внимания предыдущих исследователей-филологов, занимающихся той же темой.

Посредством исследовательского опыта классической армянской филологии П. Севак решает так называемую тайну Псевдо-Шапуха. Этот факт находит подтверждение также и в ссылках на новые наблюдения последующих исследователей темы, которые вкратце представлены в диссертации.

**Третья глава** – “Саят-Нова и армянское средневековье” посвящена второму большому труду П. Севака об искусстве великого средневекового армянского поэта Саят-Новы, который, к сожалению, также остался незавершенным. Путем аналогичного текстологического и методологического подхода, разбирая и составляя целостную картину севаковской рукописи, делается вывод, что этот труд является логическим и научным продолжением известной монографии П. Севака “Саят-Нова”. В своем труде “Саят-Нова и армянское средневековье” П. Севак выявляет такое сходство, соприкосновенность и взаимосвязь Саят-Новы и средневековых армянских песнопевцев, сравнивая их по различной тематической принадлежности, которое до того не было замечено исследователями средневековой армянской литературы. Многочисленные примеры ясно указывают на правомерность вопросов, поднятых Севаком, как и на то, что по отношению к ним не только можно, но и нужно проявить научный подход. Другим важным проявлением саятноваведения П. Севака является указание на тесную связь текста Саят-Новы с одной из главных кладезей мирового литературного искусства – со Священной Книгой. Таким образом, доказывается, что П. Севак отодвигает назад цепочку Саят-Нова - армянское средневековье до узла Саят-Нова - армянское средневековье – Ветхий и Новый Завет – греческая мифология – еврейская культура – ассирийско-вавилонская культура. С помощью такого подхода Севак и тут выходит за рамки национальной литературы и культуры, намереваясь рассмотреть национальное на поприще различных мировых культур. К различным библейским позициям и убеждениям Севак подходит с точки зрения интеллигента, живущего во второй половине 20-го века, так и (исходя из темы) с точки зрения человека, живущего в средневековье (а точнее - песнопевца).

Диссертацию завершают кратко сформулированные **выводы** и **список использованной литературы**.

Sevak A. Ghazaryan

**“Paruyr Sevak's Unpublished Heritage: Fiction and Literary Criticism”**

Dissertation to obtain the degree of Doctor of Philosophy in the field of Armenian new Literature 10.01.02

Defense day: March 20, 2013, 14:30 pm at the VAK Specialized Council 012 under the Yerevan State University.

Address: Yerevan, 52/A Abovyan str., YSU, Faculty of Armenian Philology, room N 202.

**Summary**

The PhD thesis is dedicated to the investigation of Paruyr Sevak's unpublished fiction and scientific heritage. Part of P. Sevak's unpublished poetry was reflected in some publications, thus being referred somehow. Unfortunately, his unfinished novel “Amanedge”, as well as, research works dedicated to the medieval Armenian literature, namely P. Sevak's PhD thesis entitled “Imaginary Shapuh Bagratuni and Questions of Early Renaissance in Armenia”, “Sayat Nova and the Armenian Middle Age” scientific research work were never elucidated properly in any publication. Up to now literary critics and ordinary readers came to know about their existence due to some pieces of testimonies mentioned in A. Aristakesyan's “Paruyr Sevak” monograph.

The **Introduction** includes the clarification of such issues like the underlying reasons for the choice of the topic under study, the scientific goals of the investigation, its scientific novelty.

**Chapter One** entitled “Amanedge” focuses on writer's creative stance on fiction as well as on the analysis of the novel seen as an immediate outcome of P. Sevak's creative strivings. The analysis of the original text is aimed at revealing the thematic content of the novel, its stylistic, genre characteristics and writer's art of creating images.

Unlike other works of the epoch which used to promulgate the Soviet ideology and fake moral values P. Sevak's “Amanedge” unpublished and unfinished novel is unique as the main concerns of his work are the man, human destinies and relationships. Due to this peculiar approach, the heroes of “Amanedge” are not just stereotyped, lifeless carriers of common ideology, but are quite effectual characters from artistic perspective.

P. Sevak crosses the accepted lines of fiction writing as he includes the depiction of customs, beliefs, lifestyle as well as the “geography” of the region of the epoch in question which are of great ethnographic, historical and cultural significance. In his novel P. Sevak managed “to portray” skillfully his investigated data, accumulated through time, while being able to preserve good aesthetic perception.

**Chapter Two** entitled “Imaginary Shapuh Bagratuni and Questions of the Early Renaissance in Armenia” is dedicated to the investigation of P. Sevak's PhD thesis. Describing the preserved part of the original manuscript, P. Sevak's first

serious philological research is introduced and analyzed, thus revealing the characteristics of its content and the scientific value. Considering the detailed comparison of the facts, and conclusions based on the analysis of the data it can be stated that contrary to the accepted opinions of literary critics which characterized P. Sevak's “Imaginary Shapuh Bagratuni and Questions of the Early Renaissance in Armenia” PhD thesis as “almost complete”, the given research paper in fact, is proved to be incomplete. The method of comparisons enables us to claim that while conducting “Imaginary Shapuh Bagratuni and Questions of the Early Renaissance in Armenia” unfinished research P. Sevak adhered to the correct scientific line, namely elucidating, pointing out such scientific facts that remained beyond the scope of investigation of other philologists that tackled the same topic.

Due to the classical Armenian philological analysis P. Sevak succeeds in solving the mystery of “Imaginary Shapuh” as in further investigations of the given topic many philologists adhered to his views. The newly emerged views on the topic are briefly introduced in the current PhD paper.

**Chapter Three** entitled “Sayat Nova and the Armenian Middle Age” focuses on the investigation of P. Sevak's second massive research on medieval great Armenian poet's, Sayat Nova's art. Unfortunately, the aforementioned research again remained unfinished. In the current PhD paper having applied similar methodological approach to the original text in order to decode and portray the complete image of P. Sevak's work, it can be claimed that the aforementioned research is the logical scientific continuation of his famous monograph entitled “Sayat Nova”. In his investigation “Sayat Nova and the Armenian Middle Age” P. Sevak contrasts other Armenian medieval poets' thematic directions and comes to find such ties and similarities between Sayat Nova's art and the above-mentioned poets' works that remained unnoticed by other researchers of Armenian medieval literature. Many examples witness the correctness of P. Sevak's scientific concerns, confirming the urge of their scientific investigation. The depth of P. Sevak's research on Sayat Nova's art is manifested in revealing close interconnections between Sayat Nova's works and the Bible which is the ever inspiring source of world literature. In the given PhD thesis it is proved that while investigating Sayat Nova's art P. Sevak is capable of setting links between Sayat Nova's works with Middle Age Armenia, Old and New Testaments, as well as Greek mythology, Hebrew culture, even bonding the latter with Assyrian-Babylonian civilization. Applying such approach, P. Sevak seems to be overstepping the borders of national literature and culture, viewing the latter from the perspective of different world cultures. P. Sevak interprets the various biblical beliefs, convictions not only from the viewpoint of the thinker who lives in the second half of the 20th century but also ( due to the topic of the investigation) from the perspective of the medieval individual, namely from the perspective of Armenian poet.

At the end of the PhD paper succinct **Conclusions** and Bibliography are introduced.

